



## ԱՐՄԵՆ ՄԱՆԱՎԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցոլոգիայի և  
իրավունքի ինսպիրության ասավիրանությունը,

ՀՀ արդարադատության նախարարության քրեակադրարողական  
վարչության առաջապար մասնագետ

# ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ՉԿԱՊՎԱԾ ԱՅԼԲՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ



Պատժի համակարգը քրեական օրենսգրքով սահմանված պատժի տեսակների սպառից ցանկն է, որը կոչված է ապահովելու պատժի նպատակների իրականցումը: 80-ական թվականներին և 90-ական թվականների սկզբներին ամբողջ աշխարհում քրեական քաղաքականությունը պատժի ոլորտում հակված էր ի օգուտ ազատազրկման հետ չկապված պատժների կիրառման: Քրեագետների մեծ մասը դեմ էր արտահայտվում ազատազրկում պատժատեսակին և առաջարկում էր պատժի համակարգի տարրեր մոդելներ՝ ուղղված ազատազրկում պատժատեսակի կիրառման սահմանափակմանը<sup>1</sup>: Բացի հումանիտար նկատառումներից, որոնք արձանագրվում են տարիներ շարունակ, առաջ էին քաշվում նաև ազատազրկման կիրառման հետ կապված ծախսերի և դրա բացասական

հետևանքների վերաբերյալ զուտ պրագմատիկ փաստարկներ, որոնք մի շարք երկրներում օրենսդիրներին հարկադրեցին ազատազրկում պատժատեսակի կիրառման կրածառան ուղղված քայլեր ձեռնարկել:

Վերջին մի քանի տարիների ընթացքում շատ երկրների օրենսդրություններում նկատվում են զգալի փոփոխություններ՝ որոնց նպատակը դատապարտյալների թվաքանակի կրճատումն է: Այսպես, օրինակ՝ 1993թ. Վենեսուելայում ընդունվել են երկու օրենքներ, որոնք դատարաններին բոյլ են տալիս կայացնելու ազատազրկմանն այլընտրանք համարվող պատժի նախատեսող դատավճռու, կամ փոփոխելու դատավճռը՝ ազատազրկում պատժատեսակը փոխարինելով որոշակի աշխատանքներ կատարելու կամ կրթական ծրագրերում ընդգրկվելու պահանջով: 1992թ. գերմանական օրենսդիրները երկրի վերամիավորումից հետո առաջացած դատարանների ծանրաբեռնվածության խնդիրը լուծելու համար քրեական օրենսգրքում փոփոխություններ են կատարել՝ հողվածների սանկցիաներում ավելացնելով այլընտրանքային պատժներ:

Ներկայումս ամբողջ աշխարհում ազատազրկման հետ չկապված պատժների համակարգը շարունակում է զարգանալ: Դրանց մեջ առավել շատ տարածում են ստացել հանրային աշխատանքները: Եվ, եթե արևմտյան երկրները վերը նշված պատժների կիրառման ոլորտում արդեն ունեն բավականին փորձ, ապա Կենտրոնական Արխայի, նախկին



## ԼՂՀ դատական իշխանություն

Խորհրդային երկրներում դեռ նոր են սկսվում կիրառվել<sup>2</sup>: Հայաստանի Հանրապետության համար, որ գտնվում է տնտեսապես ծանր վիճակում, քրեական օրենսդրությունում ազատազրկման հետ չկապված պատիժների ինստիտուտի գարգացումը առավել քան արդիական է:

Քրեափառական քաղաքականության ժամանակակից միտումներն իրենց արտացոլումը գտան ՀՀ 2003թ. քրեական օրենսգրքում: Այս օրենսգրքի հիմնական գաղափարներից մեկը, համեմայն դեպք հոչակված գաղափարներից մեկը՝ քրեափառական ներգործության միջոցների խստացումն է՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ու չարամիտ հանցագործների նկատմամբ և ընդհակառակը՝ ազատազրկման հետ չկապված մեղմ պատիժների կիրառումը ոչ մեծ և նշշին ծանրության հանցագործությունների կապակցությամբ: Դրա հետ մեկտեղ հաշվի են առնվել ազատազրկման հետ չկապված պատիժներին և սանկցիաներին վերաբերող միջազգային փաստաթղթերի առաջարկությունները<sup>3</sup>:

Ազատազրկման հետ չկապված պատիժները պատմի համակարգում զգալի դեր և նշանակություն ունեն: Վերը նշված պատիժների սոցիալական արժեքն այն է, որ դրանց կիրառման ժամանակ հասարակությունը չի մեկուսացվում հանցավորի վրա ներգործելով գործնրացից, ինչպես դա լինում է ազատազրկում պատիժը կիրառելու դեսպում:

Այսօր քրեական իրավունքում պատմի համակարգի ձևավորման և դրա կառուցման սկզբունքների վերաբերյալ գրեթե ոչ մի մենագիր հետազոտություն չկայանական հայեցակարգերը կողմնորոշված են միայն մասնակից պատմություններում: Ժամանակակից պատմությունները պատմությունների վերաբերյալ համակարգում պատմությունները, քրեազետները երկար ժամանակ դրանք դիտում էին մեկ միասնական համակարգային համակցության մեջ, բոյլ չտալով պատմի համակարգը բաժանելու հարաբերականորեն ավտոնոմ կառուցվածքային տարրերի: Սակայն, վիլխուսիայության և համակարգերի ընդհանուր տեսության մեջ, տվյալ կատեգորիան դիտվում է որպես տարրեր գործառնական միավորների համակցություն, որոնք միմյանց հետ փոխապակցված են և փոխգործակցում են միևնույն ընդհանուր նպատակին հասնելու համար<sup>4</sup>: Ուստի, եթե նշում ենք, որ պա-

րոլոր տեսակի պատիժների համայիք կիրառումը, ինչպես դա տեղի է ունենում արտասահմանյան երկրներում: Բայց, քանի որ նախկին հայեցակարգերը իրենց հետքի են թողել ներկայիս պատմի համակարգի ձևավորման վրա, ուստի անհրաժեշտ է կարծ անդրադառնալ դրանց հիմնական դրույթներին և սկզբունքներին:

Դեռևս 19-րդ դարի վերջերին պրոֆեսոր Ն.Ս. Տագանցելը պատմի համակարգը սահմանել է որպես «տվյալ օրենսգրքի համար բնութագրական կոնկրետ միջոցների խումբ, որոնք գտնվում են փոխադարձ ենթակայության կամ փոխհարաբերակցության մեջ»<sup>5</sup>: Ավելի ուշ Ս.Վ. Պոզնեշինը, զարգացնելով տվյալ դիրքորոշումը, պատմի համակարգը դիտում էր որպես քրեական օրենսգրքում առկա հարկադրանքի միջոցների համակցություն, որոնք գտնվում են փոխհարաբերակցության մեջ և դասավորված են ըստ իրենց հարաբերական կարևորության աստիճանի<sup>6</sup>:

Ն.Ա. Բելյանը, չքացառելով պատմի համակարգի ամբողջականության հայեցակետը, առաջարկում է պատմի բոլոր տեսակները բաժանել հիմնական, լրացուցիչ և բացադիր (մահապատմի) պատիժների<sup>7</sup>:

Այսպիսով, երկար ժամանակ պատմի համակարգի սահմանումը դիտվել է նրա ամբողջականության տեսանկյունից, որը ենթարկվում է միևնույն սկզբունքներին և գործառնության օրինաչափություններին: Չքացառելով պատիժները որոշակի չափանիշներով դասակարգելու հնարավորությունը, քրեազետները երկար ժամանակ դրանք դիտում էին մեկ միասնական համակարգային համակցության մեջ, բոյլ չտալով պատմի համակարգը բաժանելու հարաբերականորեն ավտոնոմ կառուցվածքային տարրերի: Սակայն, վիլխուսիայության և համակարգերի ընդհանուր տեսության մեջ, տվյալ կատեգորիան դիտվում է որպես տարրեր գործառնական միավորների համակցություն, որոնք միմյանց հետ փոխապակցված են և փոխգործակցում են միևնույն ընդհանուր նպատակին հասնելու համար<sup>8</sup>: Ուստի, եթե նշում ենք, որ պա-



տիժները իրենցից ներկայացնում են որոշակի համակարգ, հետևաբար այն բաղկացած է որոշակի ներքնապես փոխկապակցված են՝ թահամակարգերից, որոնք ունեն իրենց մասնավոր նպատակները և ձևավորման սկզբունքները:

Ըրեական իրավունքի գիտության մեջ պատժի ենթահամակարգերի տեսությունը այսօր գտնվում է զարգացման փուլում։ Օրենսդիրը չի օգտագործում «համակարգ» հասկացությունը, այլ այն ՀՀ քրեական օրենսգրքում անվանում է «պատժի տեսակներ»։ Համաձայն ենք Կ.Ա. Միջի հետ, որ պատիժների օրենսդրական ցանկը ներկայացվում է որպես որոշակի համակարգ միայն տեսական–մեթոդաբանական տեսանկյունից, ինչը գիտագործնական նպատակներ է հետապնդում<sup>9</sup>։

Զարգացնելով տվյալ միտքը, նա եկել է այն եզրահանգման, որ օրենսդրությամբ սահմանված պատժի տեսակների ցանկը, նույնիսկ տեսական առումով, դեռևս չունի համակարգի հատկանիշներ, քանի որ չի արտացոլում պատիժների կիրառման և փոխգործակցման մեխանիզմների ներքին կապերը, մրանց քանակական և որակական հատկանիշները և համակարգային մոտեցման այլ տարրերը։ Օրենսդրությամբ սահմանված պատժի տեսակները պատժի համակարգի առաջնային տարրերն են, և մեթոդաբանական առումով առավել ճիշտ է հետազոտությունը սկսել այդ համակարգի ամբողջականությունը կազմող այդ տարրերի պարզաբանումը<sup>10</sup>։

Իրավաբանական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ պատժի տեսակները քրեական օրենսդրությամբ սահմանված պատիժներն են, որոնք ընդգրկված են պատժի համակարգում, որպես դրա կառուցվածքային հիմնական տարրեր, որոնք ունեն իրենց անվանումը, հատուկ բովանդակությունը և հատկանիշները, որոնցով առանձնանում են պատժի մյուս տեսակներից<sup>11</sup>։

Ա.Լ. Ցվետինովիչը առաջարկում է պատժի համակարգը բաժանել համապատասխան տեսակների, ելեւով նրանից, թե մարդու որ

արժեքների և շահերի սահմանափակմանն են ուղղված դրանք։ Այս չափանիշով նա տարբերակում է պատիժներ, որոնք սահմանափակում կամ գրկում են ազատությունից, պատիժներ, որոնք սահմանափակում են սեփականության իրավունքը, պատիժներ, որոնք բարոյական ազդեցություն են ունենում և այլն<sup>12</sup>։

Գործնական տեսանկյունից ավելի կարևոր է պատիժների համակարգը դիտել դատապարտյալին հասարակությունից մեկուսացնելու չափանիշով՝ հաշվի առնելով այն, թե տվյալ պատժատեսակը որքանով է իրականացնում դա։ Այսպիսի մոտեցումը ընդլայնում է դատարանի հնարավորությունը՝ պատժի ընտրության ժամանակ ապահովելու տցիալական արդարության սկզբունքը և պատժի համաշաբությունը կատարած հանցագործությանը։ Նման մոտեցմանը պատժի համակարգի հետազոտությունը արդարացված է ոչ միայն քրեական իրավունքի, այլ նաև տցիալական այլ գիտությունների դիրքերից։

Այսպիսով, մեթոդաբանական տեսանկյունից ճիշտ կինը ազատազրկման հետ չկապված պատիժները ընդհանուր պատժի համակարգում դիտել որպես առանձին ենթահամակարգ։ Ինչպես ցանկացած համակարգ, ազատազրկման հետ չկապված պատիժների ենթահամակարգը նույնական հատկանիշները՝

1. ձևավորվում է պատժի ընդհանուր համակարգի շրջանակներում՝ ընդհանուր սկզբունքների և նպատակների հիման վրա,

2. արտացոլում է պատիժների հումանիզմի սկզբունքը,

3. արտահայտում է քրեափական հարկադարձի տնտեսման սկզբունքը,

4. կարող են կիրառվել հիմնականում ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունը և հատկանիշները, որոնցով առանձնանում են պատժի մյուս տեսակներից,

5. ունի իր համակարգային կառուցվածքը և ձևավորման սկզբունքները,

6. ավելի մեծ չափով է թույլ տալիս իրականացնելու պատժի տարբերակման և ան-



## ԼՂՀ դատական իշխանություն

հատականացման սկզբունքը:

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել ազատազրկման հետ չկապված պատիճների համակարգի կառուցման սկզբունքների վրա:

Պատժի համակարգի կառուցման սկզբունքները կախված են եղել մեծ թվով ոչ իրավական հանգամանքներից (տնտեսությունից, հասարակության սոցիալական կառուցվածքից, պետական կարգի և այլն) և արտացոլել են պետության քաղաքականությունը հանցավորության դեմ տարվող պայքարում՝ կոնկրետ պատմական ժամանակաշրջանում:

Այսպես, քրեական իրավունքի գիտության մեջ նշվում է, որ պատժի համակարգի կառուցման սկզբունքները քրեական իրավունքի գիտության հիմնական գաղափարների և դիրքորոշումների արտացոլումն են, որոնցով այս կամ այն պատմական ժամանակաշրջանում դեկավարվում են օրենսդիրները՝ պատժի համակարգը կառուցելիս<sup>13</sup>: Այդ իսկ պատճառով, դրանք չեն կարող լինել մեկրնմիշտ տրված հիմնական գաղափարներ կամ դիրքորոշումներ, քանի որ փոփոխական են, կախված են այս կամ այն ժամանակաշրջանում հանցավորության դեմ պայքարի պետության քրեական քաղաքականությունից, պատժի նպատակներից, հասարակության կրոնական, բարոյական և մշակութային հայացքներից: Սակայն սկզբունքները համբնվում են մեկ հարցում՝ միշտ շատ, թե թիզ արտացոլում են համամարդկային հումանիստական արժեքները որպես հանցավորության դեմ տարվող պայքարի միջոց:

Պատժի համակարգի ձևավորման սկզբունքների վերաբերյալ քրեագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել: Այսպես, Ս.Վ. Պողնիշը համարում էր, որ պատժի համակարգը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով մի շարք պահանջներ՝ պատժը պետք է բավականաչափ պատժից ուժ ունենա, այսինքն՝ հանցավոր գործունեության ձգտումը զարգելու կարողություն, այն պետք է հնարավորին հումանիստական լինի, չպետք է անհիմն տառապանքներ պատճառի, պատժի միջոցները պետք է հնարավորինս անհա-

տականացված լինեն, պատիժը պետք է հնարավորին թիզ չարիք պատճառի հանցագործի հարազատներին: Սակայն չկան և չեն կարող լինել այնպիսի պատժից միջոցները, որոնք պատժելով հանցագործին՝ չարիք չպատճառեն հանցագործի հարազատներին, ուստի պատժից միջոցները պետք է լինեն բաժանելի: Այս պահանջը ենում է նրանից, որ պատիժը պետք է հնարավորին կանխի ռեցիդիվը, այն պետք է կատարած հանցագործությանը հանցավ լինի, որպեսի դատարանը յուրաքանչյուր անգամ հանցագործին պատժելով, նրան ավելորդ տառապանքներ չպատճառի, կարողանա ընտրել այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է նոր հանցագործությունները կանխելու համար<sup>14</sup>:

Ն.Դ. Սերգեյևսկին համարում էր, որ պատժի համակարգը պետք է ձևավորվի այնպիս, որ առավել մեծ հնարավորություն ընձեռնվի պատժի անհատականացման համար: Այս տեսանկյունից նա պատժի համակարգի ձևավորման սկզբունքը է համարել պատժի անհատականացման սկզբունքը: Այս առիրով նա նշել է. «քանի որ պատիժն առաջին հերթին անձին դատապարտելու և նրան պարապելու արտաքին ձևն է, այն պետք է լինի անհատականացված, այսինքն՝ հնարավորինս տարածվի միայն դատապարտյալի, այլ ոչ թե նրա հարազատների վրա»: Այդ կարծիքին են նաև Լ.Ս. Բելոգրից-Կոտլյարևսկին, Ն.Ս.Տագանցելը, Ի.Յ. Ֆոյինցիկին<sup>15</sup>:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ սահմանված պատժի համակարգի ընդհանուր սկզբունքներն են՝ օրինականության (ՀՀ քր. օր.-ի 5-րդ հոդված), օրենքի առջև հավասարության (ՀՀ քր. օր.-ի 6-րդ հոդված), ըստ մեղքի պատասխանատվության (ՀՀ քր. օր.-ի 9-րդ հոդված), արդարության և պատասխանատվության անհատականացման (ՀՀ քր. օր.-ի 10-րդ հոդված), մարդասիրության սկզբունքները (ՀՀ քր. օր.-ի 11-րդ հոդված): Օրենսդրությամբ սահմանված սկզբունքների հետ միասին, քրեական իրավունքի գիտության մեջ առաջարկվում են



պատժի համակարգի նաև այլ սկզբունքներ, օրինակ՝ պատժի որոշակիության սկզբունքը (պատժի չափի և ժամկետի հստակ սահմանումը, անորոշ դատավճիռների անբոլյատրելիությունը), վերականգնման սկզբունքը, որը ենթադրում է դատարանի կողմից բոլոր տրված դատական սխալի դեաքրում վճարի փոխառուցում (նյութական վճարի փոխառուցումը, բարոյական վճարի փոխառուցումը), տնտեսման սկզբունքը, պատմական ավանդույթների սկզբունքը (պատժի համակարգի ծեսավորման ժամանակ հաշվի առնել հասարակության բարոյական և կրոնական հայացքները)<sup>16</sup>:

Հարկ է նկատել, որ ազատազրկման հետ չկապված պատիժների համակարգի ծեսավորման սկզբունքներն արտացոլված չեն քրեական իրավունքի տեսության մեջ: Ազատազրկման հետ չկապված պատիժների սկզբունքները ճասամբ իրենց արտացոլումն են գտել միջազգային փաստարդերում: Մասնավորապես, ազատազրկման հետ չկապված պատիժների բավարարության և լրիվության սկզբունքը, մի շաբթ հանցագործությունների համար դեպենալիզացիայի (քրեական պատժից և պատասխանատվությունից ազատել) և պարբերականացման սկզբունքը<sup>17</sup>:

Այս սկզբունքները պետությունից պահանջում են ստեղծել այնպիսի պատժի համակարգ, որը, մի կողմից, բոլոր կտա առավել շատ տարբերակելու պատիժը՝ բազմաթիվ գործոններ հաշվի առնելով, մյուս կողմից, կիենի ապաքրեալիքանացման կամ մի շաբթ հանցագործությունների դեպենալիզացիայի առաջին բայլը, քրեական պատասխանատվությունը փոխարիժներով ներգործության այլ միջոցներով, որոնք գտնվում են քրեական արդարադատության ոլորտից դուրս:

Թվում է, որ ազատազրկման հետ չկապված պատիժների համակարգի հիմքում պետք է դրվեն և հետագայում օրենսդրական ծեսակերպում ստանան հետևյալ սկզբունքները՝

1. ազատազրկման հետ չկապված պատիժների բավարարություն և լրիվություն, որը

դատարաններին բոլոր կտա առավել արդյունավետ կիրառելու ազատազրկման հետ չկապված պատիժները,

2. ոչ մեծ ծանրության հանցագործությունների ապարեականացում և դեպենալիզացիա,

3. ազատազրկման հետ չկապված պատիժների ցանկի սահմանում աստիճանակարգված ձևով՝ դատապարտյալ անձնական կյանքին միջամտության աստիճանից ենթելով (նվազագույն միջամտությունից կամ դրա բացակայությունից մինչև հասուկ հսկողության սահմանում),

4. ազատազրկման հետ չկապված պատիժների ենթահամակարգում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի ապահովում: Սա նշանակում է, որ պատժի նշանակման այն սկզբունքները, որոնք նախատեսված են գործող քրեական օրենսգրքում, արդիական են նաև այլ լրնտրանքային պատիժների համար: Մասնավորապես, առավել խիստ այլընտրանքային պատիժը պետք է նշանակվի այն դեպքում, երբ պակաս խիստ պատիժները չեն կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը: Կամ՝ այլընտրանքային պատիժը պետք է անհրաժեշտ և բավարար լինի հանցանք կատարած անձին ուղղելու (ճիշտ կիյներ ասել անձին հասարակություն վերահնատեղելու, նրա իրավականատակ վարքագիծը ապահովելու) և նոր հանցագործությունները կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածը նախատեսում է ազատազրկման հետ չկապված իինգ տեսակի պատիժներ՝

1. տուգանքը,

2. որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելը,

3. հանրային աշխատանքները,

4. հասուկ կամ գինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից գրկելը,

5. գինվորական ծառայության մեջ սահմանափակումը:



## ԼՂՀ դատական իշխանություն

Արտասահմանյան երկրներում ազատազրկման հետ չկապված պատիժների շարքին է դասվում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելը (ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդված): Սակայն, կարծում ենք, որ ճիշտ են այն քրեագետները, որոնք այս ինստիտուտը համարում են պատժից ազատելու տեսակ<sup>19</sup>:

Ազատազրկման հետ չկապված պատիժների հետազոտությունը լիարժեք չի լինի, եթե ուշադրություն չդարձնենք պատժատեսակների աստիճանակարգությանը՝ ըստ դրանց խսության: Նախկին քրեական օրենսգրքում պատժատեսակները բվարկվում էին առավել խիստ պատժից դեպի նվազ խիստ պատիժը հերթականությամբ, իսկ նոր քրեական օրենսգրքով՝ ընդհակառակը: Պատիժների նման աստիճանական դասավորվածությունը կարևոր նշանակություն ունի օրենսդրի և առավել ևս դատարանի համար: Այդ համակարգն ակնհայտ է դարձնում, թե օրենսդրին ինչպես է գնահատում յուրաքանչյուր պատժատեսակի հարաբերական խսությունը, և կողմնորոշում է դատարանին առավել արդյունավետ պատժատեսակի ընտրության, մասնավորապես, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժից նշանակելիս:

Պատժի համակարգում առաջինը նշվում է տուգանքը: Փաստորեն, օրենսդրի կարծիքով այն ամենամեղմ պատժատեսակն է: Ըստ եռթյան, սա երևի թե ճիշտ մոտեցում է, որովհետև տուգանքի դեպքում դատապարտյալի գրկանքները զուտ նյութական բնույթ են կրում: Հաջորդը որոշակի պաշտոնները գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելն է: Ի տարրերություն տուգանքի, որը միանվագ պատիժ է, այս պատժատեսակը կիրառվում է որոշակի տևողությամբ: Ըստ եռթյան, դատապարտյալը հաճախ որոշակի ժամանակով գրկվում է այն գործունեությամբ, որը նրա եկամուտի աղբյուրն է կամ աղբյուրներից մեկը, ինչը կարող է բավականաշափ ծանր հետևանքների առաջացնել նրա կամ նրա ընտանիքի համար: Ուստի ճիշտ կլիներ պատժի համակարգում դրանց տեղերը փոխիլու:

Խիստ է, քան հանրային աշխատանքները:

Հաջորդը հանրային աշխատանքներն են: Առողջող քրեական օրենսգիրքը սահմանում է հանրային աշխատանքների բավականաշաք երկար ժամկետ՝ 2200 ժամ: Սակայն, հանրային աշխատանքների նման երկար ժամկետ ներկայում գրեթե ոչ մի երկիր քրեական օրենսդրության մեջ չկա: Պեսք է ճշել, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում այդ ժամկետը խիստ կրճատվել է: հանրային աշխատանքները նախատեսվում է 60 ժամից մինչև 270 ժամ տևողությամբ: Հանրային աշխատանքների դեպքում գրկանքները դրսուրդում են ժամանակի կրոստի և ֆիզիկական ծանրաբեռնվածության, ինչու չէ նաև որոշակի իմաստով ազատության սահմանափակման ձևով: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ դատապարտյալի, ինչու չէ նաև նրա ընտանիքի համար ունեցած բացասական հետևանքների տեսանկյունից հանրային աշխատանքները պակաս խիստ պատժատեսակ է, քան որոշակի պաշտոնները գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից գրկելը: Ուստի ճիշտ կլիներ պատժի համակարգում դրանց տեղերը փոխիլու:

Ինչ վերաբերվում է հասուլ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակափորման դասից գրկելուն, ապա այն կարող է կիրառվել միայն որպես լրացուցիչ պատիժ և նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներից որևէ մեկով: Այն դատարանների կողմից գործնականում չի կիրառվում: ՀՀ քրեական օրենսգրքի 53 հոդվածի համաձայն՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործության համար անձին դատապարտյալի դատարանը, հաշվի առնելով հանցավորի անձը բնութագրող տվյալները, նրան կարող է գրկել հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակափորման դասից: Փաստորեն, այս պատժատեսակի կիրառումը օրենսդրի բողնում է դատարանի հայեցողությանը, այն առավել շատ նմանվում է քրեափական նորմերով նախատեսված



հարկադրանքի այլ միջոցի, քան պատժի: Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է այն պատժի համակարգի հանել և քրեական օրենսգրում ընդգրկել, որպես քրեական կանոնադրության մասին համարական հարկադրանքի այլ միջոց:

Չինկորական ծառայության մեջ սահմանափակումը գործող քրեական օրենսգրության կազմում է ազատազրկմանն այլընտրանք համարվող պատիժների ցանկը: Փաստություն, այս պատժատեսակը օրենսդրությունը է որպես առավել խիստ այլընտրանքային պատժ: Եթե զնահատենք այս պատժատեսակի բովանդակությունը, ապա դրա առավել խիստ այլընտրանքային պատժի լինելու հանգամանքը կարելի է կասկածի տակ առնել: Սակայն, եթե հաշվի առնենք դրա տևողությունը, ապա ինչ խոսք կարելի է այն ավելի խիստ համարել քան տուգանքը, հանրային աշխատանքները, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեգիր իրավունքից գրկելը: Վերջինի հետ կապված պետք է նշել, որ թեև անձը լիովին գրկում է գործունեության որոշակի տեսակով գրադեգիր հնարավորությունից, այնուամենայնիվ պահպանվում են այլ աշխատանքով գրադեգիր հնարավորությունները: Բացի այդ, դատապարտյալը կարող է գրկել ոչ թե այն գործունեությամբ գրադեգիր իրավունքից, որը նրա եկամուտի միակ կամ հիմնական աղբյուրն է, այլ այնպիսի գործունեությամբ գրադեգիր իրավունքից, որը երկրորդական նշանակություն ունի: Մինչդեռ զինվորական ծառայության մեջ սահմանափակման դեպքում անձը որևէ այլ հնարավորություն չունի քան շարունակելու իր աշխատանքը, ընդորում՝ գրկելով եկամուտի մի զգալի մասից, առաջխաղացման հնարավորությունից:

Պետք է նշել, որ մեր կարծիքով, գործող ՀՀ քրեական օրենսգրության նախատեսված այլընտրանքային պատիժների ցանկը թերի է: Կարծում ենք, հիմնական բացընդունակ այն է, որ այս ցանկում բացակայում է այնպիսի պատժատեսակ, որն իր խստությամբ կարող

է իրական այլընտրանք հանդիսանալ ազատազրկմանը, բացի այդ հնարավորություն կտար վերասցիալականացնելու դատապարտյալի՛ առանց նրան հասարակությունից մեկուսացնելու: Խոսքը արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններին հայտնի տնային կամ ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգում նախատեսված ազատության սահմանափակման մասին է: Հենց այս պատժատեսակն է, որը, մեր կարծիքով, պետք է իրական այլընտրանք հանդիսանա ազատազրկմանը, որովհետև իր ժամկետներով (նախատեսվում է վեց ամսից երեք տարի ժամկետով), բովանդակությամբ (որոշակիորեն սահմանափակվում են անձի ազատությունները), վերասցիալականացման հնարավորություններով (ենթադրվում է վերասցիալականացմանն ուղղված աշխատանքների իրականացում պրոբացիոն ծառայության կողմից) կարող է դառնալ պատժի նպատակների իրականացման առավել արդյունավետ միջոցներից մեկը:

Անփոփելով վերոգրյալ՝ կարող ենք նշել, որ ազատազրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների համակարգի ճիշտ կառուցումը, դրա կատարելագործումը, նոր այլընտրանքային պատիժներ նախատեսելը կարող են եապես նպաստել քրեական օրենսդրության և հատկապես պատժի արդյունավետությանը:

*1. Տին Բյուտենբերգ Գ.Բ. Совершенствование законодательства о наказании //Советское государство и право. 1980. N 6. C. 72-79; Гальперин И.М. Задачи совершенствования теории и практики применения наказания, не связанные с лишением свободы // Наказания, не связанные с лишением свободы. М.: Юрид. лит., 1972, էջ 3-30; Кароли Бард. Альтернативные меры уголовного наказания // Альтернативы тюремному заключению. Penal Reform International, Информационный пакет N 2. M.:PRI, 2001.*

*2. Տին Վիվեն Стерн. Разработка мер, альтернативных тюремному заключению в*



## ЛҮГ դատական իշխանություն

странах Центральной и Восточной Европы и Средней Азии: Справочник. Венгрия: Институт конституционной и правовой политики, 2002, էջ 62:

3. Shēi Об усовершенствовании применения Европейских правил относительно общественных санкций и мер воздействия (Рекомендация N 22, принятая Комитетом Министров Совета Европы 29.09.2000 г.) // Аспект. Информационный бюллетень (Украина). 2001. N 4 (5). էջ 52-55; Рекомендация N R (92) 16 Комитета Министров государствам-членам относительно Европейских правил по применению общественных санкций и мер взыскания (принята Комитетом Министров 19 октября 1992 года) // Организационно-правовые основы деятельности уголовно-исполнительных инспекций: Сборник нормативно-правовых актов / Под ред. проф. О.В. Филимонова. Томск: Изд-во Том. ун-та, 2002, էջ 107-123:

4. Shēi Багрий-Шахматов Л.В. Система наказаний по советскому уголовному праву, их классификация и правовое регулирование исполнения: Автoref. дис.... докт. юрид. наук. Минск, 1969, էջ 37; Елеонский В.А. Уголовное наказание и воспитание позитивной ответственности личности. Рязань, 1979, էջ 83:

5. Shēi Таганцев Н.С. Лекции по уголовному праву. Часть общая. Вып. 4. СПб., 1892, էջ 12-19:

6. Shēi Познышев СВ. Основные начала науки уголовного права. М., 1912. С. 465.

7. Shēi Беляев Н.А. Уголовно-правовая политика и пути ее реализации. Л., 1986. С. 120.

8. Shēi Васильев А.М. Правовые категории. Методологические аспекты разработки системы категорий теории права. М.: Юрид. лит., 1976. С. 150; Философский энциклопедический словарь. М., 1983. С. 345

9. Shēi Сыч К.А. Уголовное наказание и его классификация: опыт теоретического моделирования: Монография. СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2002, էջ 190:

10. Shēi Сыч К.А. Աշված աշխ, էջ 191:

11. Shēi Курс советского уголовного права: В 6 т. / Под ред. А.А. Пионтковского, П.С. Ромашкина, В.М. Чхиквадзе. М., 1970. Т. 3. էջ 56:

12. Shēi Цветинович А.Л. Дополнительные

наказания: функции, системы, виды. Куйбышев, 1989, էջ 39:

13. Shēi Гальперин И.М. Наказание: социальные функции, практика применения. М., 1983, էջ 143; Осипов П. П. Теоретические основы построения и применения уголовно-правовых санкций. Л., 1976, էջ 57; Шаргородский М.Д. Наказание, его цели и эффективность. Л.: Изд-во Ленингр. ун-та, 1973, էջ 96-103:

14. Shēi Познышев СВ. Основы пенитенциарной науки. М.: Мосполиграф, 1924, էջ 87:

15. Shēi Познышев СВ. Основы пенитенциарной науки. М.: Мосполиграф, 1924, էջ 87:

16. Shēi Сакаев А.И. Принципы построения системы уголовных наказаний // [http://www.tisbi.ru/ResourcesA<sup>^</sup>estnik/vestO\\_1\\_1/vest\\_1\\_3.htm](http://www.tisbi.ru/ResourcesA^estnik/vestO_1_1/vest_1_3.htm)

17. Shēi Стандартные минимальные правила ООН в отношении мер, не связанных с тюремным заключением (Токийские правила) // Уголовно-исполнительное право: Сборник нормативных актов / Под ред. П.Г. Пономарева. М.: Новый юрист, 1997, էջ 91-105; Рекомендация N R (92) 16 Комитета Министров государствам-членам относительно Европейских правил по применению общественных санкций и мер взыскания (принята Комитетом министров на 482-ом заседании заместителей министров 19 октября 1992 года) // Организационно-правовые основы деятельности уголовно-исполнительных инспекций: Сборник нормативно-правовых актов / Под ред. проф. О.В. Филимонова. Томск: Изд-во Том. ун-та, 2002, էջ 107-123:

18. Shēi Более подробно см.: Головко Л.В. Альтернативы уголовному преследованию в современном английском праве // Правоведение. 1998. N 3. էջ 65-73; Дани-люк С.А. Вопросы освобождения от уголовной ответственности // Правоведение. 1987. N 3. էջ 48-54; Делла Марра Т. Уголовный процесс Италии: реформа и контрреформа // Государство и право. 1994. N 1. էջ 56-67:

19. Shēi Ткачевский Ю. Юридическая природа условного осуждения // Уголовное право. 1999, N 1, էջ 35: